# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.01.2022թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ՆԳ-2021/330**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա.Պարանյանի (լիազորագիր՝ տրված 22.12.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.12.2021թ. թիվ 26/26-1/20924-2021 գրությամբ «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 13.12.2021թ. թիվ Ե/01/853-21 գրության հիման վրա, 20.12.2021թ. թիվ 26/26-1/20924-2021 գրությամբ նախաձեռնել է «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>«Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 29.12.2021թ. գրությամբ, հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ն մասնակցել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի կողմից ատաղձագործական ապրանքների և պարագաների գնման նպատակով հայտարարված ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-21/8 ծածկագրով ընթացակարգին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 29.11.2021թ. տեղի ունեցած հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ի հայտում արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների և նկատմամբ և որոշում է կայացվել նիստը մեկ օրով կասեցնել և առաջարկել ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 29.11.2021թ. տեղի ունեցած հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրությունը www.gnumner.am կայքում հրապարակվել է միայն 02.12.2021թ.:

«Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ն ստացել է հետևյալ բովանդակությամբ շտկման ծանուցում.

«Դուք դիմել եք ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-21/8 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին: Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է էլեկտրոնային աճուրդի մասնակցության Ձեր Դիմում-Հայտարարության շտկումը, որում նկա! տվել են հետևյալ թերությունները. Առաջարկվում է կատարել համապատասխան շտկումը»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.12.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը մերժել է «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ի հայտը՝ 2-րդ չափաբաժնի մասով, շտկումը սահմանված ժակետում չկատարելու հիմքով:

- Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը

և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայություն¬ների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ինչպես արդեն նշել ենք, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 29.11.2021թ. տեղի ունեցած հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 2

արձանագրության համաձայն՝ «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ի հայտում արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների և նկատմամբ և որոշում է կայացվել նիստը մեկ օրով կասեցնել և առաջարկել ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 29.11.2021թ. տեղի ունեցած հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրությունը www.gnumner.am կայքում հրապարակվել է ոչ թե նիստին հաջորդող աշխատանքային օրը, այլ մի քանի օր անց, այն է՝ 02.12.2021թ.:

Միևնույն ժամանակ, Ընթացակարգի «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ն միայն 02.12.2021թ. էլեկտրոնային եղանակով ստացել է հետևյալ բովանդակությամբ շտկման ծանուցումը (արտատպումը կցվում է). «Հարգելի Եվրոֆուրնիտուրա ՍՊԸ, Դուք դիմել եք ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-21/8 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին: Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է էլեկտրոնային աճուրդի մասնակցության Ձեր Դիմում-Հայտարարությունը, որում նկատվել են հետևյալ թերությունները. ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-21/8 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետը մեկ աշխատանքային օրով նիստը կասեցվել է և Եվրոֆուրնիտուրա ՍՊԸ-ին աառաջարկվում է ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ համակարգի միջոցով, շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Առաջարկում ենք գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունները և ուղղված Դիմում-Հայտարարությունն ուղարկել համակարգի միջոցով»:

Վերոհիշյալ ծանուցման անորոշ բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ ՍՊԸ-ն չէր կարող կռահել, թե հայտում, ավելին, ոչ չափաբաժնի մասով է արձանագրվել անհամապատասխանությունը, ընկերությունը ինչ պետք է շտկի:

Գտնում ենք, որ նման վերացական շտկման ծանուցման պարագայում «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ն չպետք է կրի այն չկատարելու բացասական հետևանքները՝ հաշվի առնելով, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի կատարել Կարգի 41-րդ կետի պահանջները, ուղարկված շտկման ծանուցումը անորոշ է և ոչ հստակ, իսկ հայտերի բացման արձանագրությունը www.gnumner.am համակարգում հրապարակվել է Օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ՝ ուշացումով:

Բողոքներ քննող անձին նաև խնդրում ենք նկատի ունենալ, որ գնահատող հանձնաժողովը 29.11.2021թ. տեղի ունեցած հայտերի բացման նիստի թիվ 2

արձանագրությամբ է արձանագրել «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում անհամապատասխանություններ: Եվ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը նույն նիստի օրը դրա մասին պետք է էլեկտրոնային եղանակով տեղեկացներ մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սակայն գնահատող հանձնաժողովը շտկման ծանուցումը ուղարկել է մասնակցին միայն նիստից երեք օր անց՝ այն է՝ 02.12.2021թ., և համապատասխանաբար հայտը մերժվել է 06.12.2021թ.: Մինչդեռ Կարգի 41-րդ կետի պահանջների համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը պարտավոր էր այդ մասին մասնակցին ծանուցել հենց 29.11.2021թ., ինչը տվյալ դեպքում չի կատարել:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարի՝ նույն նիստի օրը արձանագրված անհամապատասխանության մասին էլեկտրոնային եղանակով մասնակցին տեղեկացնելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Նման պարագայում  քանի որ գնահատող հանձնաժողովի կողմից չի պահպանվել Կարգի 41-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթը, ուստի

գտնում ենք, որ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ նույն փաստական հանգամանքներում (Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետի խախտման հիմքով) գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանը թիվ ՍՑ-ՆԳ-2021/298 ընթացակարգով 04.11.2021թ. կայացրած թիվ ՍՑ-ՆԳ-2021/298 որոշմամբ մերժվել է «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը: Նույնը արձանագրվել է նաև թիվ ՍՑ-ՆԳ-2021/312 ընթացակարգով:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/330 ընթացակարգի շրջանակներում 23.12.2021թ. ժամը 09:45-ին և 28.12.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը 28.12.2021թ. ժամը 09:15-ին նիստին, ով իր հերթին պնդել է ներկայացված դիրքորոշումը:

**3. <u>Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.12.2021թ. թիվ Ե/01/853-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի կողմից 2021 թվականի նոյեմբերի 17-ին հայտարարված «ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-21/8» ծածկագրով

ատաղձագործական ապրանքների և պարագաների գնման ընթացակարգի շրջանակում հայտ է ներկայացրել «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ն:

Հայտնում եմ, որ Մասնակցի կողմից ներկայացված հայտում 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում առկա է «կամ համարժեք» արտահայտությունը: Տեղ գտած անճշտությունը շտկելու նպատակով գնահատող հանձնաժողովի կողմից տրմադրվել է մեկ աշխատանքային օր, որի ընթացքում «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ի կողմից շտկում չի իրականացվել:

Կից ներկայացնում եմ գնահատող հանձնաժողովի արձանագրությունները և Մասնակցի կողմից ներկայացրած տեխնիկական բնութագիրը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/330 ընթացակարգի շրջանակներում 23.12.2021թ. ժամը 09:45-ին և 28.12.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2021/330 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2021/330 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-21/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ի հայտի տեխնիկական բնութագրում 2-րդ չափաբաժնի համար առկա է «կամ համարժեք» բառերը:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 8.11 կետը, որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի հրավերի 8.11 կետով սահմանված ժամկետում շտկում չի ներկայացվել և որոշում կայացրել վերջինիս հայտը 2-րդ չափաբաժնի մասով անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2021թ. թիվ 26/26-1/20924-2021 գրությունը, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի 13.12.2021թ. թիվ Ե/01/853-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե ***հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-21/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ի հայտի տեխնիկական բնութագրում 2-րդ չափաբաժնի համար առկա է «կամ համարժեք» բառերը:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 8.11 կետը, որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի հրավերի 8.11 կետով սահմանված ժամկետում շտկում չի ներկայացվել և որոշում կայացրել վերջինիս հայտը 2-րդ չափաբաժնի մասով անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.01.2022թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/2/410-2022 գրությամբ, խնդրել է հայտնել ե՞րբ է Պատվիրատուի կողմից Ընկերությանն ուղարկվել արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը և ինչ բովանդակությամբ, ինչպես նաև տրամադրել ծանուցման արտատպումը:

Ի պատասխան նշված գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 11.01.2022թ. թիվ Ն/26-1/445-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան վերոհիշյալ գրության հայտնում ենք, որ էլեկտրոնային աճուրդների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-21/8 ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ի eurofurnitura@mail.ru էլեկտրոնային

փոստի հասցեով ավտոմատ ծանուցման եղանակով ***02/12/2021թ. ժամը 13:42-ին ուղարկվել է «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» վերնագրով էլեկտրոնային ուղերձ նամակ (կցվում է)***»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի ***նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից,*** ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

***Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:***

***Այսինքն՝ Կարգի 41-րդ կետով սահնմանված է, հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարի համար էլեկտրոնային եղանակով նույն օրը դրա մասին մասնակցին ծանուցելու իմպերատիվ պահանջ, որի չպահպանման դեպքում, կարող են անտեսվել այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը և հանգեցնել սխալ մեկնաբանման:***

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը ***<u>նույն օրը</u>*** դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, մինչդեռ՝ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ Ընկերությունը նույն օրը՝ ***<u>29.11.2021թ.,</u>*** ծանուցվելու փոխարեն ծանուցվել է ***<u>02.12.2021թ.:</u>***

Միևնույն ժամանակ կից ներկայացված «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» վերնագրով էլեկտրոնային ուղերձի նամակի ուսումնասիրության արդյունքում հարկ եմ համարում արձանագրել, որ նամակն ուղարկվել է հետևյալ բովանդակությամբ.

***<u>«Դուք դիմել եք ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-21/8 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին: Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է էլեկտրոնային աճուրդի մասնակցության Ձեր դիմում-հայտարարությունը, որում նկատվել են հետևյալ թերությունները. ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-21/8 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետը մեկ աշխատանքային օրով նիստը կասեցվել է և «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ին առաջարկվում է ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ համակարգի միջոցով, շտկել արձանագրված անհամապատասխանությունները համակարգի միջոցով»:</u>***

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ</u>՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: <u>Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.11-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի

պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: ***<u>Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:</u>***

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանման և սույն գործի փաստական հանգամանքների, մասնավորապես՝ ՀՀ ֆինանսների նախարարության 11.01.2022թ. թիվ Ն/26-1/445-2022 գրությամբ տրամադրված «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» վերնագրով էլեկտրոնային ուղերձ վերնագրով նամակի համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չեն պահպանվել Կարգի 41-րդ կետով սահմանված իմպերատիվ պահանջները, ինչպես նաև իր իսկ կողմից կազմված հրավերով սահմանված պահանջները, այն է՝ ***<u>մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները</u>***, այսինքն՝ արձանագրելով անհամապատասխանություններ, Ընկերությանն ուղարկվող ծանուցման մեջ ընդհանրապես չեն նկարագրվել հայտնաբերված անհամապատասխանությունները, որպիսի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում, Ընկերությունը զրկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավունքները լիարժեք իրացնելու հնարավորությունից:

Վերոգրյալ փաստական հանգամանքների ուժով՝ գտնում եմ, որ Պատվիրատուի կողմից Կարգով սահմանված իմպերատիվ պահանջների խախտմամբ անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումն իրականացնելու արդյունքում ծագած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և հանգեցնել վերջինիս նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառմանը, այն է՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

# ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.12.2021թ. թիվ 26/26-1/20924-2021 գրությամբ «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**